հիշիր սկսած Նախիջևանի կողմերից՝ Եղեգնաձոր[50], Գեղամ[51], Լոռի[52], Համզաչիման[53], Նիգ[54], Շարաբխանա[55], Շիրակ, Զարիշատ[56], Կարսի գյուղերը, Կաղզվանի[57] ձորը, Ալաշկերտ[58], Մակու[59], Աղբակ[60], Սալմաստ[61], Խոյ[62], Ուրմի[63], Թավրիզի կողմը, Արարատյան դաշտը, Երևան քաղաքը, Կոտայք գավառը, Ծաղկնուձորը[64], Գառնու ձորը[65], Ուրծաձորը[66]*, Կարինի ու Բասենի[67] գավառները, Խնուս[68], Մանազկերտ[69], Արծկե[70], Արճեշ[71], Բերկրի[72], Վանի բոլոր գավառները և այլ շատ տեղեր գերեց ու ավերեց, այրեց, հրդեհեց բոլոր բնակավայրերը, որպեսզի շինություն չմնա: Այս ամենը, ինչ գրեցինք, քշեց տարավ բնակեցրեց պարսից բոլոր գավառները: Բնակեցված տեղերը հետևյալներն են՝ Արդաբիլ, Ահար, Ապահր, Ղազվին, Համադան, Շիրազ, Գուլփեքան, Քրման, Սպահան, Խունսար, Սիլախոր, Փարիա, Փուավարի,Գենդուման, Լնջան, Ալինջան, Խոյիկան, Շըխշաբան և պարսից այլ գավառներ, որոնք անունով չգիտեմ: Ժողովուրդը այն տեղերը մնաց մինչև այսօր: Սրանցից առաջ Կախեթի և Քարթլիի** գավառների բնակիչներին քշեց տարավ Ֆահրապատ, Աշրափ, Քուշան: Եվ այսպես բնակեցրեց Իրաքի երկրները և պարսից ամբողջ պետությունը մարդաշատ արեց: Նրա բոլոր այլ գործերը նկարագրել է Առաքել վարդապետը:

ԳԼՈՒԽ ԺԳ
(ՇԱՀԻ) ԴԱՎԻԹ ԵՐԵՑԻ ՏՈՒՆ ԱՅՑԵԼԵԼԸ

Ըստ իր սովորության՝ Շահ Աբաս թագավորը ծպտվեց մանրավաճառի (չարչու) կերպարանքով, որ կոչվում է խուռդաֆռիշ***: Ելավ, շրջում էր ռամիկների մեջ, հարցնում ու տեղեկանում էր: Այսպես գնալով ու շրջելով մտավ մի գյուղ, որ կոչվում է Լնջան: Գնաց մտավ մի այրի քահանայի տուն, որի անունն էր Դավիթ: Դավիթը գրիչ էր (գիրք արտագրող) և Հայսմավուրք էր գրում: Շահը տուն մտավ և ասաց՝ մանր ապրանք առնո՞ւմ եք: Քահանան հարցրեց՝ լավ գրիչ կտրիչ ունե՞ս (զմելի, փոքրիկ դանակ): Վաճառականը

* Բնագրում Ուրնաձոր կարդում ենք Ուրծաձոր:

** Վրացական գավառներ են:

*** Պարսկերեն:

ասում է, այո, ունեմ բանկագին և լավ դանակ: Քահանան ասում է՝ բեր որ տեսնեմ: Իսկ նա դնում է նրա առջև իր վաճառելիքը: Առնելով փոքրիկ գրչահատը (զմելին) և տալիս է նրա գինը՝ տասներեք կոպեկ (փող, դանգ, ստակ): Եվ սկսեցին խոսել շատ բաներ: Կեղծ վաճառականը ասում է. «Տեր հայր (բառացի՝ տերտեր, հայր), շահից գո՞հ եք, թե՞ դժգոհ»: Քահանան ասում է. «Դեռ ոչ լավն եմ իմանում շահի, ոչ վատը, բայց որովհետև թագավոր է, վայել չէ նրա մասին վատ ասել»: Եվ երկար խոսակցությունից հետո վաճառականն ասում է. «Այդ ի՞նչ գիրք ես գրում»: Քահանան ասում է. «Մեր լեզվով Հայսմավուրք[73] է կոչվում, իսկ ձեր լեզվով՝ շեհդ քիթաբի»: Շահն ասում է. «Աստծու սիրուն, եթե շահին սիրում ես, պատմիր շեհդների (նահատակների) մասին, թե ինչպես են շեհդ դառնում»:

Ապա քահանան բանալով (գիրքը) գտավ Հակոբ նահատակին վերաբերող գլուխը: Կարդում և թուրքերեն պատմում էր մի առ մի սրբի մարմնի կտրատումը: Իսկ շահը ունկնդրելով լսում և մտապահում էր:

Շահը հարցնում է, թե ո՞վ էր այդ ժամանակ թագավորը, որ այդ բանը արեց: Քահանան պատասխանում է, թե նրա անունը Հազկերտ էր: Շահը հարցնում է. «Ի՞նչ հավատքի էր»: Քահանան պատասխանում է՝ պարսիկ էր, բայց կրակապաշտ էր և ոչ մահմեդական: Շահն ասում է. «Այժմ էլ Սպահանում կրակապաշտ կա, որոնց գյավուր են կոչում»: Քահանան ասում է. «Այո, այն ժամանակ նրանք էին թագավոր»:

Շատ խոսելուց հետո շահը ելնում և ասում է. «Աղոթիր»:

Եվ ելավ գնաց իր տեղը, բայց հիշում էր այն պատմությունը, որ քահանան պատմեց:

Մի օր շահը կանչեց իրենց հավատի գլխավորներին, որոնց ասում են սատր կամ նավապ (նախարարապետ, նախագահ) և էնդիմալ դովլաթին (արքունական խնամակալ), որ վազիրն է՝ անունը Սարիթաղի ներքինի և այլ գլխավորների ու ասաց նրանց. «Այս գիշեր մի զարմանալի երազ տեսա, և ահա սիրտս դողում է»: Նրան ասում են. «Պատմիր քո երազը և թող նավապը (նախարարապետը) մեկնի»: Շահն ասում է, թե իմ երազը անմեկնելի է, բայց գործնականում կատարելի: Եվ այն, ինչ լսել էր քահանայից, իր վրա էր առել (իրեն էր վերագրել), որպես թե ինքն էր արել: Եվ հետո ասում